Հաստատված է
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2023 թվականի նոյեմբերի 24-ի N 16-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչության (այուհետ՝ Վարչություն) 2024 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Տեսչական մարմնում Վարչության կողմից 2023 թվականի ընթացքում իրականացված ներքին հսկողության արդյունքում բացահայտված խնդիրները և ռիսկերը:

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության գործունեությունն իրականացվում է ըստ ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագրի:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչությունը իրականացնում է ներքին հսկողական գործառույթ, որն ուղղված է տեսչական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը, արդյունավետության բարձրացմանը:

Ծրագիրը հիմնականում բխում է որակի ապահվման վարչության նպատակներից, այն է՝ տեսչական մարմնի գործունեության բարելավումը և շարունակական կատարելագործումը: Որակի ապահովման վարչությունը աջակցում է տեսչական մարմնին հասնելու իր նպատակներին՝

1) տեսչական մարմնում ռիսկերի կառավարման միջոցով.

2) տեսչական մարմնի հսկողական, կառավարչական համակարգերի արդյունավետության գնահատման միջոցով, այդ թվում՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և տեսչական մարմնի գործունեությանն առնչվող այլ պայմաններին (իրավական ակտերին և այլն) համապատասխանություն.

բ. տնտեսող, արդյունավետ ու օգտավետ գործառույթներ.

գ. տեղեկությունների վստահելիություն ու ամբողջականություն.

դ. կորուստներից, չարաշահումներից ու վնասներից ռեսուրսների պահպանման հուսալիություն.

ե. տեսչական մարմնի կառավարման խորհրդի հանձնարարականների կատարում և նպատակների իրագործում.

3) տեսչական մարմնի գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու միջոցով:

Ծրագրի խնդիրն է Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտումը և գնահատումը:

III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. 2024 թվականին նախատեսվող միջոցառումները ներկայացվում են առանձին ուղղություններով՝ ելնելով որակի ապահովման վարչությանն օրենսդրությամբ վերապահված լիազորություններից, ինչպես նաև՝ հաշվի առնելով Տեսչական մարմնում 2023 թվականի ընթացքում ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը, ինչպես նաև իրականացվում են վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ (Հավելված 1):

1) Կարգապահական կանոնների պահպանում.

Նախատեսվում է ուսումնասիրել բոլոր ծառայողական քննությունների գործերը, քննության անցկացման բազմակողմանիությունը և անկողմնակալությունը, բոլոր հարցերի և հանգամանքների լիարժեք պարզաբանումը, համապատասխան եզրակացության կազմումը, կարգապահական տույժերի կիրառման սահմանված ընթացակարգի պահպանումը, կիրառված տույժի համաչափությունը: Նախատեսվում է նաև իրականացնել աշխատաժամանակի ռեժիմի պահպանման նկատմամբ հսկողություն՝ ինչպես մուտքի/ելքի գրանցող սարքերի տվյալների ուսումնասիրմամբ, այնպես էլ տարածքային ստորաբաժանումներ այցերի միջոցով, այդ թվում՝ անակնկալ:

Նախատեսվում է նաև ուսումնասիրել աշխատողների ամսական խրախուսումները և դրանց հիմնավորումները:

2) Տեսչական մարմնի դեմ բերված բողոքներ.

Նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի, նրա աշխատողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի

վերաբերյալ ստացված յուրաքանչյուր բողոքի ընթացքի և արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն, բողոքների պատճառների բացահայտում:

Նախատեսվում է ուսումնասիրել Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ հանրությունից և տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված արձագանքները (թեժ գծով զանգեր, նամակներ, հրապարակումներ և այլն), ինչպես նաև կատարել հարցումներ:

3) Տեսչական մարմնի գործունեության արդյունքների նկատմամբ ներքին հսկողությունը նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի փաստացի գործունեության, մասնավորապես՝ վերահսկողության և կանխարգելիչ գործունեության ուսումնասիրությամբ և վերլուծությամբ, ինչպես նաև՝

- **Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի նկատմամբ ներքին հսկողություն**. Այս միջոցառման շրջանակներում նախատեսվում է իրականացնել այդ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովումը, սահմանված ժամկետների պահպանումը և արդյունքը, բացահայտել միջոցառումների կատարմանը խոչընդոտող խնդիրները և ռիսկերը:
- **Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում.** որպես առանձին միջոցառում, նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով՝ Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված կատարողականի գնահատման մեթոդաբանության համաձայն:
- **Կադրային համալրում, աշխատողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործում.**

Նախատեսվում է ուսումնասիրել Տեսչական մարմնում կադրային համալրման գործընթացը, ինչպես նաև աշխատողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործման ուղղությամբ իրականացրած աշխատանքները:

IV. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Որակի ապահովման վարչության պետը յուրաքանչյուր եռամսյակ Խորհուրդ է ներկայացնում հաշվետվություն՝ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հայտնաբերված խնդիրների և բացահայտված ռիսկերի վերաբերյալ՝

ներկայացնելով առաջարկություններ Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ (Հավելված 2, Ձև 1):

V. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Ծրագրով նախատեսված միջոցառումները ներառում են որակի ապահովման վարչության կողմից Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտման և գնահատման գործողությունների նկարագրությունը:

4. Ներքին հսկողության ընթացքում ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իր գործունեության ընթացքում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների պահպանումը:

5. Որակի ապահովման վարչությունն իր գործունեությունն իրականացնում է անկախության և անկողմնակալության սկզբունքներով:

6. Որակի ապահովման վարչության աշխատողները Ծրագրի իրականացման ընթացքում պարտավորվում են գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների, ինչպես նաև չհրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հավելված 1

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ
		I. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ	
1	Ներքին հսկողություն կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ	Ուսումնասիրվում է. 1) ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների պահպանման վիճակը, արձանագրված խախտումները, ձեռնարկված միջոցառումները, ծառայողական քննությունների նշանակումը, ընթացքը և արդյունքները. 2) գործուղման թերթիկների ուսումնասիրություն. 3) աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները, դրանց հիմնավորումները. 4) ստորաբաժանումների/աշխատողների կատարողական կարգապահությունը՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմից ստացված, ինչպես նաև Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականների, հրամանների կատարումը, հաշվետվությունների ժամանակին և պատշաճ ներկայացումը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում ժամկետների պահպանումը և կատարողական կարգապահությանն առնչվող այլ հարցեր: Բացահայտվում են վերոնշյալ միջոցառումների մասով առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	յուրաքանչյուր դեպքում յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր ամիս
2	Ներքին հսկողություն բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ	Ուսումնասիրվում է. 1) վարքագծի կանոնների (այդ թվում՝ նվերներ ընդունելու արգելք, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, շահերի բախում) խախտումների վերաբերյալ ներկայացված բողոքները և արդյունքը: Բացահայտվում են վերոնշյալ միջոցառումների մասով առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	յուրաքանչյուր դեպքում
		II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ	
3	Վարչական կամ դատական կարգով ներկայացված բողոքների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում են Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ներկայացված բողոքները. 1) Վարչական կարգով ներկայացված բողոքներ, բողոքարկման վարույթների ընթացք, ընդունված որոշումներ, բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն.	յուրաքանչյուր դեպքում՝ վճռի/որոշման ընդունումից

		2) դատական կարգով բողոքարկված գործեր, ընդունված վճիռներ/որոշումներ, բավարարված վճիռների/որոշումների պատճառների վերլուծություն: Բացահայտվում են վերոնշյալ միջոցառումների մասով առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	հետո
4	Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ ստացված արձագանքների վերլուծություն և գնահատում	Ուսումնասիրվում են Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ հանրությունից և տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված արձագանքները. 1) թեժ գծով զանգեր. 2) դիմումներ, գրություններ, հրապարակումներ, հարցումներ: Բացահայտվում են վերոնշյալ միջոցառումների մասով առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր դեպքում
III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ			
5	Վերահսկողական աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում և վերլուծվում են. 1) իրականացված ստուգումների, վարչական վարույթների վերաբերյալ հաշվետվություններ. 2) հաշվետվությունների հավաստիության պարզում՝ այդ թվում՝ առանձին գործերի ուսումնասիրությամբ. 3) օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանման պարզում. 4) գործուղումների կազմակերպման, մարդկային և ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության ուսումնասիրություն և վերլուծություն: Բացահայտվում են վերոնշյալ միջոցառումների մասով առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր ամիս յուրաքանչյուր եռամսյակ
7	Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրի կատարման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը, նախատեսված ժամկետների պահպանումը: Բացահայտվում են առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	նախատեսված ժամկետների համաձայն
8	Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի կատարման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը, նախատեսված ժամկետների պահպանումը: Բացահայտվում են առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	նախատեսված ժամկետների համաձայն

9	Պաշտոնական կայքէջի գործարկման և տեղեկատվական սպասարկման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը, կայքէջի թարմացման հաճախականությունը, տեղադրված տեղեկատվության արդիականությունը, Տեսչական մարմնի գործունեության լուսաբանման մակարդակը, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով պահանջվող տեղեկատվության հրապարակումը:	մշտապես
10	Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում ըստ հաստատված չափորոշիչների	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքները և գնահատվում կատարողականը:	յուրաքանչյուր եռամսյակ
11	Կադրային համալրման, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործման գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կադրային հագեցվածությունը, հաստիքների համալրման գործընթացը, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների բարելավմանն ուղղված միջոցառումները, նախատեսված ժամկետները, արդյունքը:	յուրաքանչյուր եռամսյակ
12	Ներքին հսկողություն ստորաբաժանումներում աշխատանքների համաչափ բաշխման, աշխատողների ծանրաբեռնվածության նկատմամբ:	Ուսումնասիրվում և վերլուծվում են. 1) ստորաբաժանումների ծանրաբեռնվածությունը, գերբեռնվածության կամ թերբեռնվածության դեպքում՝ պատճառները. 2) ստորաբաժանումների ներսում աշխատանքների համաչափ բաշխումը: Բացահայտվում են առկա խնդիրները, դրանց առաջացման պատճառները և ռիսկերը: Իրականացվում է վերլուծություններ և ներկայացվում առաջարկություններ:	3-րդ եռամսյակ

Հավելված 2

Ձև 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Հաշվետվությամբ ընդգրկված ժամանակահատված՝ 2024 թվականի -------- եռամսյակ

1. **Միջոցառում** ----------

Ուսումնասիրության արդյունք----------

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր----------

Առաջարկություններ ----------
---

2. **Միջոցառում** ----------

Ուսումնասիրության արդյունք----------

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր----------

Առաջարկություններ ----------
---

3. **Միջոցառում** ----------

Ուսումնասիրության արդյունք----------

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր----------

Առաջարկություններ ----------